Հայցադիմումի փաստական հիմքում, ի թիվս այլնի, դրված է եղել այն հանգամանքը, որ Հայցվոր «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ ընդունում է Պայմանագրով սահմանված ժամկետում ծառայությունները մատուցած չլինելու և այն պատասխանողի ոչ պատշաճ վարքագծով պայմանավորված լինելու փաստերը, իսկ 17.07.2024թ. ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչվել են հայցադիմումի փաստական հիմքում դրված փաստերից տարբերվող այլ փաստեր, որոնք վերոնշյալ իրավամեկնաբանողական դատողությունների լույսի ներքո չեն կարող դրվել սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հիմքում:

Այնուամենայնիվ, առաջնորդվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով և, ըստ այդմ, անդրադառնալով քննարկվող դիրքորոշմանը՝ Դատարանն արձանագրում է, որ դրանում պարունակվում են կողմերի միջև կնքված այլ պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելու, անվճար այլ ծառայություններ մատուցելու վերաբերյալ տեղեկություններ, որոնք, դուրս են սույն հայցի առարկայի շրջանակներից և անհրաժեշտ չեն սույն դատական ակտի կայացման համար:

Հետազոտելով և գնահատելով դիրքորոշմանը կից ներկայացված «Հաշվետվություն» վերտառությամբ փաստաթուղթը՝ Դատարանն արձանագրում է, որ այն վերաբերելի ապացույց չէ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հաստատման կամ հերքման տեսանկյունից, քանզի, ի թիվս այլնի, դրա՝ ընդհանուր տեղեկություններ բաժնից հետևում է, որ այն կազմված է ի կատարումն սույն գործով հայցվորի և պատասխանողի միջև կնքված 2023թ. պայմանագրի, որը դուրս է սույն քաղաքացիական գործի հայցի առարկայի շրջանակներից:

5. <u>Դատարանի ծախսերի բաշխման վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունները.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն որ Հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, հայցը ենթակա է մերժման, սույն քաղաքացիականմ գործով այլ դատական ծախսեր չկան՝ Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 241-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԱՐԹԻՆ ԷՆԹՐՓՐԱՅՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Դատարանի՝ 07.06.2024թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԱԼԼԱ ՔՅՈՒՐՔՉՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am